

Թաւրիզի իւր հետ ունենալով Ախալքալաքի նախկին գործակալ Տ. Ընձակ վարդապետին, որ կարգուեցաւ Սալմաստի առաջն. փոխանորդ:— Իսկ Ախալքալաք ուղարկուեցաւ, Մեծ պահոց օրերում ժողովրդին քարոզելու և մխիթարելու համար՝ Տ. Մեսրոպ արեղայ Մաքսուդեան:

Տպարանի նախկին տեսուչ Տ. Մատթէոս վարդապետ կարգուեցաւ Բաղուի գործակալ և մեկնեց զէպի իւր պաշտօնատեղին:



ՏԱՃԿԱՀԱՅՔ

† Տ. Խոռէն եպիսկոպոս Մխիթարեան.—Յունուար 22-ին Եդեսիոյ մէջ ի տէր հանդեաւ Հայ եկեղեցականութեան պատուական և պատկառելի զէմբերէն մէկը, Տ. Խորէն եպիսկոպոս Մխիթարեան: Իրենց եկեղեցւոյն և ժողովրդեան անձնուէր հին եկեղեցականութեան վերջին ներկայացուցիչներէն մէկն էր հանդուցեալ Սրբազանը, որ իր հոյժան դիտակցութեան հետ ունէր նաև հոշում և սէր դպրութեան և ըննասիրութեան:

Տ. Խորէն եպիսկ. Մխիթարեան ծնած է 1822 յունուար 1-ին Վանայ Աւանց գիւղի մէջ. հօրը անունը՝ Մխիթար Մինասեան, և մօրը՝ Աննա Արքահամեան: Մկրտութեան անունն էր Արքահամ: Նախնական կրթութիւն մը առած է Աւանց գիւղի և Վանայ դպրոցներուն մէջ. յետոյ 1859-ին Երուսաղէմի Ս. Յակովբեանց վանուց վարժարանին մէջ շարունակած է իր ուսումը, քերականութեան, ճարտասանութեան, տրամարանութեան և կրօնադիտութեան դասեր առնելով Վանանդեցի Յովհաննէս վարժապետէն, և եկեղեցական երգեցողութեան՝ Պալաթցի Կարապետ վարժապետէն:

Եկեղեցական ըլլալէ առաջ ըրած է նաւավարութիւն՝ Վանայ ծովուն վրայ, և զբազրութիւն Սաֆրաճի արհեստաւորացի Խասդիւղ Կ. Պոլսոյ:

Գպրութեան աստիճան ընդունած է 1835-ին, սարկաւազ ձեռնադրուած է 1857-ին յերուսաղէմ Ս. Յակովբեանց տաճարին մէջ՝ ձեռամբ Տ. Յովհաննէս պատրիարքի. 1862-ին կը ձեռնադրուի վարդապետ Տ. Խորէն անուանակոչութեամբ:

Նախ քան զվարդապետութիւնն՝ ի Ս. Յարութիւն երեք տարի լուսարարութեան ու սարկաւազութեան պաշտօն վարած է. անկէ յետոյ եղած է յաջորդաբար տեսուչ Ս. Աստուածածնի տաճարին, Ս. Յարութեան տաճարին ու Ռէմլէի վանուց:

1864-ին Երուսաղէմի վանական վարչութեան որոշմամբ ընդունած է մասնաւոր իշխանութիւն գաւազան կրելու: 1870 թ.-ին Տ. Եսայի Պատրիարքի և վանական վարչութեան որոշմամբ Կ. Պոլսոյ Երուսաղէմատունը եկած է Պատր. Փոխանորդի պաշտօնով, զոր վարած է 5 տարի:

1871-ին ընտրուած է նաև անդամ Կեդր. վարչութեան Կրօն. ժողովին: Նոյն ժողովին շրջանը աւարակէ յետոյ՝ հրատարած է փոխանորդի պաշտօնէն ու դարձած է Երուսաղէմ: Վեց ամիս վերջ սահայն՝ հրաւիրմամբ Կ. Պոլսոյ Տ. Ներսէս Պատրիարքին՝ վերադարձած է Պոլիս, վարած է 3 տարի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ քարոզչի պաշտօնը, ընդ նմին երկու տարի ալ Կրօն. ժողովոյ անդամակցութեան ու ատենապետութեան պաշտօնները, ինչպէս նաև միէ ու կէս տարի Պատրիարքական խորհրդականութեան պաշտօնը՝ Տ. Ներսէս Պատրիարքի քով:

1876 սեպտ. 25-ին ի Պալատ՝ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ մէջ, ընդունած է աստիճան ծայրագոյն վարդապետութեան: 1876-ի սկիզբները Եդեսիոյ Առաջնորդ ընտրուած ըլլալով՝ Կեդր. վարչութեան Խառն ժողովի որոշմամբ և վկայականաւ գացած է Ս. Էջմիածին, և 1786 նոյ. 6-ին Տ. Գէորգ Գ. կաթողիկոսէն ձեռնադրուած է Եպիսկոպոս Եդեսիոյ վիճակին վրայ:

Առաջնորդական պաշտօնավարութեան միջոցին, 1881-ին Տ. Ներսէս Պատրիարքի և 1887-ին՝ Տ. Յարութիւն Պատրիարքի հրամանաւ այցելու հովուի պաշտօնով երկէցս գացած է Տիարպէքեր:

Տ. Խորէն Արքազանի տկարութեանը պատճառաւ՝ Առաջնորդական պաշտօնավարութենէ հրատարականը ընդունուած է Պատրիարքարանի կողմէ 1897 իետր. 11-ին, թէև անկէ առաջ ալ, 1896-ի սկիզբները, ուրիշ եկեղեցականի մը ներկայութիւնն անհրաժեշտ նկատուելով, արդի Առաջնորդը՝ Հազարապետեան Տ. Անանիա Վ., Առաջնորդական փոխանորդի պաշտօնով նոյն թուականի յուլիս ամսոյ 10-ին ժամանած է Եդեսիա, ուրկէ

կը սկսի արդէն Տ. Խորէն եպիսկոպոսի իրական ձեռնթափութիւնը գործէ:

Տ. Խորէն եպոսկ. Մխիթարեան իր վերջին անպաշտօն վիճակին մէջ՝ Եղեսիոյ քաղաքամերձ Ա. Սարգսի վանքը կը բնակէր:

Տ. Խորէն Սրբազանի գովելի բարեմասնութիւններէն էին իր հաղուագիւտ անշահասիրութիւնը, սրուն համբաւը հեռուներն ալ տարածուած ըլլալով, քահանայացուներ՝ եթէ մօտերնին ուրիշ եպիսկոպոս ալ ունենային՝ կը նախընտրէին Եղեսիա դալ ձեռնադրութիւն ստանալու, ուր ձեռնադիր Սրբազանը սովոր չէր բան մը պահանջելու, և մինակ կարողին յօժարակամ նուէրը կընդունէր, եթէ ուղէր ներկայացնել: Իր երկարձիգ աշխատասիրութիւնները մեծ խանդ մը կը մատնեն իր մօտ գրական աշխատութեամբ պարապելու, թէ և ինքն իսկ համեստօրէն կը խոստովանէր այդ մասին իւր սահմանափակ կարողութիւնը:

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ

Տպագրուածներ

1. Համառօտ պատմութիւն Ա. Երուսաղէմի.
2. Համառօտութիւն Թեսալոսի բարոյախօսութեան.
3. Համառօտութիւն իմացական փիլիսոփայութեան.
4. Ուղևորութիւն վերալի Սիրաքայ.
5. Աղիաճք Կատարինէի.
6. Պարտէղ Տիեզերական.
7. Պատմութիւն կրօնային պաշտ. և արարողութեանց հին ու նոր ազգաց.
8. Սկզբունք նիւթական իմաստասիրաց և քրիստ. աստուածաբանից.
9. Գիտական շոյեր:

Անսիւպներ

1. Ծանօթութիւն ընդհ. ազգաց՝ երեք հատոր: 2. Քանի մը կրօնական խնդիրներ: 3. Նպատակ՝ Աւետարանական ճշմարտութեանց:

(Սուրհանդակ)

Խապայեան Սրբազանի տեղ Երուսաղէմի վանքի լուսարարապետ ընտրուեցաւ Բաղդատի առաջն. տեղապահ Գաբրիէլ վարդ. Անոյշեան: Այս առթիւ Պոլսոյ թերթերին յայտնում են թէ «քանի որ Անոյշեան Ծ. Վ. լուսարարապետ ընտրուեցաւ և

գործօն դեր մը պիտի ստանձնէ վանքին մէջ, Ելմաից տեսուչ Տ. Ղևոնդ Վ. պիտի հրաժարի իր պաշտօնէն և իր ունեցած դրամներով պիտի ապրի, և միւս հոգմէ Տ. Գէորգ եպիսկ. ալ հաւանականաբար Իդմիր երթայ իբրև առաջնորդ, կամ իբրև հոգևոր հովիւ Ռումանիոյ: Ասոր իբրև պատճառ ցոյց կը արուի այն պարագան որ երկու եկեղեցականներն ալ դադարաւարակից չեն Անոյշեան Վ. ի:

— Ամերիկայի Առաջնորդ Տ. Յովսէփ եպսկ. Սարաճեան, որ իր հոգևոր հովութեան շրջանակին մէջ կաշխատի օգտակար ըլլալ և տեղւոյն եկեղեցիներու նիւթական մատակարարութիւնը ապահովել, այս օրերս 3000 տոլարով երկու նոր առն դնած է՝ իբր կալուած Աւսդրի եկեղեցիին համար: Սարաճեան եպսկ. Նիւ—Խորքի մէջ ալ եկեղեցի մը շինել կուզէ, և մինչև մէկ աստիճան այդ եկեղեցին այլ շինուելու ապահովութիւն կայ, քանի որ արդէն Քալիֆորնիայի Է. Կիւլպէնիեան եղբարք խոստացած են 10,000-ական տոլար տալ. 10,000 տոլարի չափ խոստում ալ առնուած է մնացեալ երկրորդ կարգի վաճառականներէն և ժողովուրդէն:

— Ա. Եջմիածնէն Պատրիարքարան ղրկուած են նոր տպագրուելիք գրաբար Աստուածաշունչի Ծննդոց առաջին 24 գլուխները պարունակող նմոյշները: Ս. Պատրիարքը այդ 15 նմոյշները զրկած է Պոլիս գանձուող ձեռնհաս եպիսկոպոսներու և Հայ լեզուի ու բանասիրութեան մասնագէտներու, որպէս զի իրենց քսելիքը ըսեն: Ձեռ շատ լաւ է, ինչպէս տպագրութիւնն ալ սիրուն և մաքուր է, թէպէտ առանց պատկերի, հակառակ ասիէ առաջ լսուածին:

— Ա. Պատրիարքը յունուար 31 կէս օրին, ընկերակցութեամբ գործակատար Տիգրան էֆ. Տէր-Ներսէսեանի, Կայս. Պալատ գնաց: Սելամըզի արարողութենէն վերջը Ն. Սրբազնութիւնը՝ առաջնորդութեամբ Կայս. Պալատան արարողապետ Վ. սեմ. Իպրահիմ պէյի՝ ներկայացաւ Վեհ. Կայսեր և արժանացաւ Կայս. մեծարանաց: Ն. Վեհափառութիւնը հրամայեց իր Կայս. բարենները հաղորդել հաւատարիմ հպատակ Հայ ազգին: Ս. Պատրիարքը թէ՛ իրեն և թէ՛ իր ժողովրդեան արժանացած այս շնորհաց համար իր խորին երախտագիտութիւնը յայտնելէ յետոյ, բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Վեհափառութեան արեւշատութեան համար:

— Երուսաղէմի ժողովուրդաց վարժարանը, բաւական բարւոք ուղղութեան մէջ կը գտնուի: Այս կրթական հաստատութիւնը որ հաստատուած է Յովհաննէս Պատրիարքի օրով, իբր 42

տարի առաջ, փայլուն շրջաններէ յետոյ երբեմն նսեմացած օրեր ունեցած է. ներհայիս մէջ ունի 26 աշակերաններ, որոնք երեք դասարաններու բաժնուած են: Երրորդ դասարանը, որ բարձրագոյնն է, ունի 13 ուսանող, երկրորդը 8 և առաջինը 5: Աւելի 6 դասատու, որոնք են. Տ. Մամբրէ Եպս. Մարկոսեան՝ կրօնագիտութեան, Վրոյր՝ հայերէնի և ֆրանսերէնի, Տ. Մետրոպ Վ. Նշանեան՝ մաթեմատիկական գիտութեանց, Տ. Յարութիւն Վ. Պարոնեան՝ գեղազրութեան, Պ. Սողոմոն Գրիգորեան՝ երաժշտութեան, և Պ. Արամ, որ երկրագործական պանքային առաջին գրագիրներէն է, իր անձնական դործերը զսճելով օրը 3 ժամ Տաճկերէն դաս կաւանդէ երեք դասարանի ուսանողաց:

— Կիլիկիոյ հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի մահէն՝ այսինքն զրեթէ 10 տարիէ ի վեր Կիլիկիոյ թեմին մէջ Միւռոն օրհնուած չէ, և այս պատճառաւ այդ կողմերու համար հարկ եղած Միւռոնը Պատրիարքարանէ կը հայթայթուի: Արտուած է որ նորընտիր կաթողիկոսը իր օժումէն անմիջապէս ետքը Միւռոնօրհնութիւն կատարէ, աւելի ետքի պահելով Եպիսկոպոսական ձեռնագրութիւնը: Այս անգամ Պատրիարքարան եղած դիմումին վրայ Իսկէնտէրուն կը զրկուի բաւական քանակութեամբ Ա. Միւռոն թէ Կիլիկիոյ մէկ քանի թեմերուն և թէ Եդեսիոյ կողմերուն համար: Փոխանորդ Սրբազանը հեռագիր ուղղեց Իսկէնտէրուն, որպէս զի հոգևոր պատշաճ մեծարանօք ընդունեն զրկուած Ա. Միւռոնը:

— Մուշի Պուլանըզ գիւղի Ա. Գանիէլ վանքին վանահայր և առաջն. փոխանորդ Պետրոս Վ. իր կոչման և պաշտօնին անվայել ընթացքի մէջ գանուած ըլլալով, Մշոյ Պատր. փոխանորդ Խոսրով Վ., խորհրդակցութեամբ Գաւառ. վարչութեան, հարկ դատեր է Պետրոս Վ.-ը Մուշ հրաւիրել: Խոսրով Վ. զայս տեղեկագրելով Պատրիարքարանի, աւելցուցեր է թէ Պետրոս Վ.-ը պէտք է Վիմ անապատ զրկել, որուն միաբանն է արդէն, և այս մտօք պէտք եղած հրահանգը տրուելու է Վիմ անապատի վանահայրութեան:

— Աուսիաքնակ Ա. Եռանէսզու, որ որը տղայոց համար ասիէ առաջ 4000 բուբլի զրկած էր Պատրիարքարան, նամակաւ կիմացնէ Ս. Պատրիարքին թէ ինք հիւանդ ըլլալով, տակաւին անկողնոյ կը ծառայէ, և կը փափաքի որ այդ 4000 բուբլին անձեռնմխելի մնայ և միայն երկու տարուան համար անոր տոկոսը յատկանայ տղայոց պէտքերուն, խոստանալով միանգամայն որ իր ապաքինումէն վերջը նոր գումար մը պիտի նուիրէ, և կալուած մը գնելով արդիւնքը պիտի յատկացնէ որբանոցներու:

պէտքին: Պ. Եռանէսդու փափաքեր է որ այդ կալուածը իր անուանը վրայ չըլլայ:



Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ք



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԹԱԻՐԻՉԻ ՀԱՅՈՅ «ԱՐԱՄԵԱՆ ԵՒ Ս. ԱՆՆԱՅԵԱՆ» ԵՐԿՍԵՌ-ԴՊՐՈՅՆԵՐԻ 1901—1902 ուս. ամի.

Ա.

1901—2 ուս. տարուայ մէջ Արամեան և ս. Աննայեան երկսեռ դպրոցներում պարագմունքներն սկսուել են սեպտ. 3-ից, և 11-ից կանոնաւորուելով՝ աւել մինչև յունիսի վերջը. դպրոցական օրերի թիւը եղել է 165:

Տարուայ սկզբին Արամեան դպրոցում կային 111 աշ., նոր ընդունուեցան 34, որով եղան 145 աշ. ս. Աննայեան դպրոցում կային 81 աշակերտուհի, նոր ընդունուեցան 17, որով եղան 98 աշակերտուհի. այսպէս երկսեռ դպրոցներում կային 243 աշ. և աշակերտուհի. դրանցից տարուայ ընթացքում զանազան պատճառներով կամովին հեռացան 7 աշ. և երկուսը վախճանուեցան, որով տարուայ վերջին կային 234 աշ. և աշակերտուհի:

Բացուեցաւ այդ տարին Ե. դասարան լիակատար ծրագրով, ուստի և Արամեան դպրոցն 3 ստորին բաժանմանց հետ ունէր 5 հիմնական դաս, իսկ ս. Աննայեան դպրոցը նոյնքան ստորին բաժանմանց հետ ունէր 3 հիմնական դասարան. դրանցից առաջին բաժանմունքներն ըստ առաջնոյն միացած էին և օրիորդաց Բ. ու Գ. դասարանները մի սենեակում էին, որով 14 դասարան կար 12 սենեակում: